«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 Մայիսի 2024, N 11 - 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 6 - 3 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ» ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2024 թվականի հունվարի 16-ի N 6 - 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի» 224,7 միլիոն ՀՀ դրամի չափով պլանավորված հիմնանորոգման ծախսերում Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանի հիմնանորոգման համար նախատեսված 182,788,000 ՀՀ դրամը համակարգչային տեխնիկայի, գույքի (լսարանների կահույք, օդորակիչներ, շերտավարագույր, լամպեր և լուսարձակներ) և շինանյութի ձեռքբերման վրա վերաբաշխելու մասին հարցը, **արձանագրելով,** որ Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանի հիմնանորոգման համար նախատեսված 182,788,000 ՀՀ դրամը վերաբաշխելու հիմքում դրված է համալսարանի առնվազն 36 լսարանների ընթացիկ վերանորոգման, ժամանակակից գույքով և տեխնիկական միջոցներով (համակարգչային գույք, լայնաշերտ ինտերնետ հասանելիություն և ինտերակտիվ գրատախտակներ) համալրման ծրագիրը, որը բխում է համալսարանի որակի ապահովման բաժնի հարցումների և ուսանողական խորհրդի հարցումների արդյունքում բացահայտված լսարանային ֆոնդից և դրա գույքային ու տեխնիկական հագեցվածությունից ուսանողների և դասախոսների բավարարվածությունը բարձրացնելու, ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարության 4-րդ՝ «Ենթակառուցվածքների զարգացում» ռազմավարական նպատակի իրականացման

նպատակով հաստատված գործողությունների ծրագրի 2024 թվականին հաստատված գործողությունների կատարումն ապահովելու, մասնավորապես՝ 2024 թվականին ֆակուլտետների լսարանային ֆոնդի առնվազն 20%-ը դիզայնի, գույքով և տեխնոլոգիական միջոցներով հագեցման միասնական ստանդարտով ապահովելու, առնվազն մեկ համակարգչային լաբորատորիա և առնվազն մեկ ֆակուլտետում coworking տարածք հիմնելու գործողությունները իրականացնելու նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովման անհրաժեշտությունից՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել համալսարանի 36 լսարանների և կառավարման ֆակուլտետի 317 լսարանի վերանորոգման և կահավորման դիզայներական նախագծերը և դրանք հետայսու դիտարկել իբրև լսարանների վերանորոգման, գույքով և տեխնիկական միջոցներով համալրման միասնական մոտեցում՝ սահմանելով, որ ստանդարտին համապատասխանող յուրաքանչյուր լսարան առնվազն պետք է ապահովված լինի ինտերնետ հասանելիությամբ, ինտերակտիվ գրատախտակով, համակարգչային գույքով և միասնական ձևաչափի կահույքով՝ ըստ նախագծի առաջարկի:

2. Հավանություն տալ համալսարանի 36 լսարանների և կառավարման ֆակուլտետի 317 լսարանի վերանորոգման ծրագրին և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2024 թվականի հունվարի 16-ի N 6 - 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի» շրջանակներում սույն ծրագրի ֆինանսավորման նպատակով ծախսային հոդվածների վերաբաշխման առաջարկվող նախագծին:

3. Լիազորել համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին առաջարկություն ներկայացնել համալսարանի խորհրդին՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2024 թվականի հունվարի 16-ի N 6 - 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի» 224,7 միլիոն ՀՀ դրամի չափով պլանավորված հիմնանորոգման ծախսերում Դիլիջանի «Տնտեսագետ»

մարզաառողջարանի հիմնանորոգման համար նախատեսված 182,788,000 ՀՀ դրամը համակարգչային տեխնիկայի, գույքի և շինանյութի ձեռքբերման վրա վերաբաշխելու վերաբերյալ՝ ըստ հետևյալ համամասնությունների.

- համակարգչային գույք՝ 54,800,000 ՀՀ դրամ (որից՝ ինտերակտիվ գրատախտակներ՝ 46,800,000 դրամ, հեռուստացույցներ՝ 8,000,000 դրամ),
- կահույք և այլ գույք (ուսանողական և դասախոսական սեղաններ, համակարգչային սեղան, ամբիոն, աթոռ, կախիչ, շերտավարագույր, դեկորատիվ պարագաներ)՝ 85,966,700 ՀՀ դրամ,
- օդորակիչներ՝ 4,161,800 ՀՀ դրամ,
- շինանյութ՝ 32,243,500 ՀՀ դրամ,
- լամպեր և լուսարձակներ՝ 2,016,000 ՀՀ դրամ,
- վերանորոգվող լսարանների պատերի վրա թեմատիկ ֆոտոպրինտի ծառայության ձեռքբերում՝ 3,600,000 ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. մայիսի 27
Երևան